

ՀՅՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԾՐԱԿՈՒՄՆԵՐ

Թ. Ս. Գաբրիելյան

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մալաթիայի բարբառի մասին առաջին տեղեկությունները հրատարակվել են Պոլսում հրատարակվող «Բիւրակն» հանդեսի 1898—99 թվականների համարներում: Այդ հոդվածներից մեկում բնիկ մալաթիացի պրոֆ. Մ. Որբերյանը տվել է Մալաթիայի բարբառի քերականության մի թռուցիկ ուրվագիծ, որը հեղինակը անվանել է «Քիչ մը լեզվական»: Բարբառային բառերի արտասանությունը համեմատելով գրական արտասանության հետ, Մ. Որբերյանն այն անվանել է «աղավաղյալ բառեր»: Այդ ուրվագծի հիման վրա հայ ականավոր լեզվաբան և բարբառագետ ակադեմիկոս Հ. Աճառյանը եկել է այն եզրակացություն, որ Մալաթիայի բարբառն ունի պայթական բաղաձայնների երկու շարք՝ թրթռուն և թավ (ձայնեղ և շնչեղ խուլ): Նա տվել է Մալաթիայի բարբառի հնչյունաբանության մի քանի օրինակափունջներ¹:

Մալաթիայի բարբառի հնչյունաբանության հարցերին անդրադարձել է նաև ակադ. Ար. Ղարիբյանը: Իր «Հայ բարբառագիտություն»² աշխատության «Մալաթիա» ենթագլխում հեղինակն այդ բարբառը դասել է երկաստիճան խլազուրկ (ձայնեղներով հարուստ) բարբառների շարքը:

Սակայն նշված հեղինակների նպատակը Մալաթիայի բարբառի մենագրական ուսումնասիրությունը չէր, այլ գտնել նրա տեղը հայ բարբառների դասակարգման սխտեմում: Մեր կողմից կատարվել է Մալաթիայի բարբառի մենագրական ուսումնասիրության առաջին փորձը: Ստորև տալիս ենք մի բաժին ալո ուսումնասիրությունից, այն է՝ Մալաթիայի բարբառի հնչյունաբանությունը:

ՀՆՉՅՈՒՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Բարբառն ունի 39 հնչյուն, որից ձայնավորներ՝ 9 (ա, օ, ու, ի, ը, է, օ, օ, ու), բաղաձայններ՝ 30.

Ձայնեղ պայթականներ՝ բ, գ, դ.

Խուլ պայթականներ՝ պ, փ, տ.

Շնչեղ խուլ պայթականներ՝ փ, ք, ք.

Պայթաշփականներ՝ ձ, ժ, ց, ջ, ն, չ.

Շփականներ՝ վ, զ, ժ, դ, ֆ, ս, շ, խ, ո.

Ձայնորոյներ՝ լ, մ, ն, ր, ո, յ.

Ա-ն ունի կոշտ արտասանություն, լեզվի ստորին բարձրացմամբ: Նա առաջնային շարքի ստորին բարձրացման ձայնավոր է, ադրբեջաներեն օ հնչյունի նման: Ա հնչյունը հանդիպում է նաև այլ երկրաբարբառի պարզեցման

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 197.

² Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1933, էջ 415:

ժամանակ և ր ձայնորդից առաջ՝ մի քանի բառերում: Սակայն հաճախ այն պատահում է փոխառյալ բառերում: Ու՛՛՛ օ՛ ձայնավորները արտասանվում են ինչպես գերմաներենի ը՛. Օ հնչյունները և մեծ մասամբ լինում են օտար փոխառություններում: Բարբառը չունի երկբարբառներ և եռբարբառներ, ոչ էլ շնչեղ ձայնեղներ:

Գրաբարի և Մալաթիայի բարբառի պայթականների և պայթաշփականների համեմատությունը հետևյալ պատկերն է տալիս.

Գրաբար	Բարբառ
Ձայնեղներ՝ բ, գ, դ, ձ, ջ (անկախ դիրքում)	Ձայնեղազուրկ շնչեղ խուլեր՝ փ, ք, թ, ց, շ
Պուլեր՝ պ, տ, կ, ծ, ֆ	ա) անկախ դիրքում ձայնեղներ՝ բ, գ, դ, ձ, ջ
	բ) ս, շ, ի-ից հետո կամ ք-ից առաջ՝ խուլեր պ, տ, կ, օ, ֆ
Շնչեղ խուլեր՝ փ, ք, ր, ց, շ	Մնում են նույնությամբ:

Այս համադրությունից երևում է, որ անկախ դիրքում, այսինքն բառակզրում կամ ձայնավորների միջև, բարբառում խուլ հնչյուններ չկան: Գրաբարյան խուլերն այդ դիրքերում արտասանվում են ինչպես ձայնեղներ: Սակայն ս, շ, ի հնչյուններից հետո, հավանաբար նրանց ազդեցությամբ, հին հայերենի խուլերի արտասանությունը մնում է անփոփոխ: Նույնն ենք նկատում նաև շնչեղ խուլ ի-ից առաջ գտնված դիրքի խուլերի արտասանության ժամանակ, որտեղ վերջինները, անփոփոխ մնալով, իրենց հերթին ազդում են Ի-ի վրա և դարձնում այն ս:

Գրաբարյան ձայնեղներին բարբառում համապատասխանում են փ, ք, բ, ց, շ շնչեղ խուլերը: Այսպիսով, բարբառն ունի 2 բնույթի շնչեղ խուլեր՝ բուն փ>փ, ք>ք, բ>բ, ց>ց, շ>շ և ձայնեղազրկված շնչեղ խուլեր բ>փ, ք>ք, դ>ք, ջ>շ, ձ>ց: Սակայն նկատելի է, որ փ(<բ), թ(<դ), ք(<գ), ց(<ձ), ջ(<ջ) հնչյուններն ունեն ձայնեղության որոշ երանգ, այնինչ փ(<փ), թ(<թ), ք(<ք), ց(<ց) և ջ(<ջ)-ն դուրկ են այդպիսի երանգից:

Մյուս հնչյունների արտասանությունն առանձնապես չի տարբերվում նրանց գրական արտասանությունից:

ՀնԶՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ա. Ձայնավորների փոփոխություններ

Ա

Գրաբարի ա ձայնավորը Մալաթիայի բարբառում հիմնականում մնում է անփոփոխ. այսպես՝

ալիւր>ալիր, աղ>ադ, անուն>անուն, բան>փան, գարի>քարի, գանակ>թանագ, հաց>հաց և այլն:

Բառավերջում՝ գրաբարի ա-ն պահպանվել է բայերի եզակի թվի հրամայականում և ցուցական դերանուններում՝ աղա>աղա՛, գնա>քընա՛, խաղա>խաղա՛, սա>սա, նա>նա:

Միավանկ և երկվանկ բառերում ա-ն մնում է անփոփոխ: Օրինակ՝ մարդ > մարթ, բարի > փարի, դարի > քարի, ճերմակ > ջէրմադ, բերան > փէրան և այլն:

Ծռավանկ բառերի երկրորդ վանկի ա ձայնավորը սղվում է, եթե առաջին վանկը բաց է, և հնչյունափոխվում է ր-ի. եթե այդ վանկը փակ է (վերջին դեպքում ր-ն հանդես է դալիս բաղաձայնների կուտակման հետևանքով) օրինակ՝ ագանիլ > հաքնիլ, արտասուք > արցունք, բաժանել > փաժնէլ, բաղանիք > փաղնիք, արձակել > արցըզէլ, դաստակել > թարդրգէլ, կարկատան > դարդըզան, պարտակել > բարդըզէլ և այլն:

Ան նախածանցով և ակուն ու ազի վերջածանցներով կազմված բառերի միջաձայն ա-ն մնում է անփոփոխ. այսպես՝ անարատ > անարադ, անա ու-ած > անասված, մեկական > մէզական, չորսական > չորսագան, գեղացի > քէղացի և այլն: Իսկ անոց և անալ վերջածանցներով կազմված բայերի ածանցի միջաձայն ա-ն սղվում է. ինչպես՝ մեկանոց > մէզնոց, ութանոց > ութնոց, աղքատանալ > ախկաղնալ, երկայնանալ > էրզըննալ և այլն: Սակայն անալ վերջածանցով կազմված գրական բառերում ա-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ ուրանալ > ուրանալ, իմանալ > իմանալ և այլն: Այլ վերջածանցով կազմված բարբառային բառերում ածանցի ա-ն սղվում է, իսկ գրական բառերում՝ մնում է անփոփոխ. այսպես՝ եկաւոր > էզվոր, ծոցաւոր > ձօսվոր, բայց ուխտաւոր > ուխտավոր, հարկաւոր > հարգավոր և այլն:

Սակայն ոչ բոլոր բազմավանկ բառերումն է միջաձայն ա-ն ենթարկվում հնչյունափոխության. օրինակ՝ աղատել > ազագէլ, խայտառակ > խայտառագ. պատարագ > բաղարագ և այլն:

Ա. ձայնավորը կրել է նաև մասնակի հնչյունափոխություններ. այսպես ա > օ. ա-ի քմախնայումը նկատվում է ք ձայնորդից առաջ. օրինակ՝ արիւն > օրին, հարիւր > հօրիւր, թարթիչ > թարթիչ, շարիւլ > շարէլ:

Ա. > է. առնել էնէլ, աւերել > էվրէլ, յարդ > հէրթ, պահել էէլէլ, արձաթ > էրձաթ:

Ա. > ը. ասել > ըսէլ, լակել > լըբգէլ, կարել > կարենալ > գըրնալ, կաղանդ > գաղընդ, տարգալ > թըքալ:

Ա. > օ. անարգել > անօրքէլ «հայտնել» և թառամիլ > թօոմիլ:

Ե

Գրաբարի Ե հնչյունը բառասկզբում հիմնականում հնչվում է ինչպես է. այսպես՝ ելանել > էլլալ, երես > էրէս, երկաթ > էրգաթ, երկու > էրգու և այլն:

Նույն դիրքի Ե-ն մի քանի բառերում հնչյունափոխական այլ երևույթների ազդեցությամբ կրել է մասնակի փոփոխություններ. այսպես՝ երեք > իրէք բառում հնչյունների տարնմանությամբ, իսկ երիցսկին > իրիսգին և եղունգն > ուղունգ բառերում՝ առնմանությամբ Ե-ն հնչյունափոխվում է ի-ի: Երեսուն > առսուն բառի Ե > ա հնչյունափոխությունը բացատրվում է բառասուն > բառսուն բառի կազմության նմանակությամբ: Առաջին հայացքից կարծես առնմանության արդյունք է եղբայր > ախփար բառի Ե > ա-ն, սակայն իրականում այս երևույթի արմատներն ավելի խորն են: Դեռևս գրաբարում բառասկզբի դ-ից առաջ բառերը կարող էին ստանալ Ե կամ ա հնարանը, օրինակ՝ եղագ||աղագ եղինճ||աղինճ: Եղբայր > ախփար ձևը, որը հատուկ է նաև կը ճյուղի շատ բար-

բառների, կազմվել է հին հայերենի աղբյուր ձևից: Երբ >յափ բառում ն-ի դիմաց բարբառն ունի յա:

Բառամիջի ն-ն մի շարք փոփոխություններ է կրել.

ա) ո-ից առաջ բոլոր բառերում դարձել է ա. բեռն > փառ, լիսեռն > լրսառ, ձեռք > ցառք, սիսեռն > սրսառ և այլն.

բ) միավանկ և երկվանկ բառերում սովորաբար հնչվում է ինչպես է. ածել > հաձէլ, բերան > փէրան և այլն.

գ) մի քանի միավանկ բառերում և նրանց ածանցյալ կամ բարդ ձևերում ե-ն հնչյունափոխվում է ի-ի: Այդ բառերն են՝ խելք > խիլք, մեք > միք, սեալ > սել > սիվ, սեր > սիր, թեփ > թիփ, խեր > խիր «մի տեսակ մածուն», սիվնալ, թիփոզիլ և այլն.

դ) բազմավանկ բառերի երկրորդ վանկի ն-ն սղվում է կամ հնչյունափոխվում է ը-ի, իսկ առաջին և վերջին վանկերում հնչվում է ինչպես է. այսպես՝ ածելի > աճրի, արեգակն > արբազ, աւերել > էվրէլ, աւելել > ավլէլ, երկիլ > էրվալ և այլն: Այս դիրքի երկրորդ վանկի ն-ն չի սղվում բարդ և ածանցավոր, ինչպես նաև դրական բառերում. օրինակ՝ աներես > անէրէս, աներձագ > անէրցաք, երեքշաբթի > իրէքշափաթի, խաբեբայ > խափէփա և այլն:

Բառամիջի ն-ն կրել է նաև հետևյալ մասնակի փոփոխությունները.

ե > ա. մեծ > մանձ.

ե > ի. աւել > ավիլ, աւետարան > ավիդարան, հրեշտակ > հըրիշտագ.

ե > օ. աղեղն > աղօղ, ցերեկ > ցօրէզ, շորեքշաբթի > շօրօքշափթի:

է

Գրաբարյան է-ն բարբառում բոլոր դիրքերում հիմնականում հնչվում է է. բառասկզբի միակ օրինակը էշ > էշ բառն է: Բացի այդ, հայտնի է, որ գրաբարում և արդի հայերենում իջանել բառի արմատը՝ էջ, պահպանվում է միայն բարդությունների մեջ (վայրէջք, առէջք, ելէէջ և այլն), սակայն Մալաթիայի բարբառում էջ արմատը պահպանվում է նաև անորոշ դերբայում՝ էջնալ, էջցունէլ, քանի որ այն գտնվում է շեշտի տակ: Շեշտակորույս լինելով՝ ընդհանուր հայերենի օրինաչափությամբ բարբառում է-ն հնչյունափոխվում է ի-ի իշա, իշար, իշավ, իշիր և այլն:

Բառամիջում է-ն որպես կանոն մնացել է անփոփոխ, այսպես՝ ամէն > ամմէն, անէծք > անէսկ, գէշ > քէշ, հանդէպ(ք) > հանդէպկ, մէջ > մէշ, պէս > քէս և այլս:

Բարբառում է-ն բառավերջում հանդիպում է միայն երկու բառում՝ թէ և կիրակէ: Առաջին բառում է-ն մնացել է անփոփոխ: Կիրակէ > դիրագի բառում է-ն հնչյունափոխվել է ի-ի, որը ըլ > ի-ի առաջընթաց առնամանության արդյունք է: Բառավերջում անփոփոխ է մնում նաև գրաբարյան բացառական հոլովի է-ն՝ շուգայէ(ն), փէրնէ(ն), ջաղղէ(ն) և այլն:

ը

Գրաբարից ը-ով սկսվող հետևյալ բառերն են անցել բարբառ, որտեղ ը-ն մնացել է անփոփոխ՝ ընկեր > ընդէր, ընկոյզ > ընզօզ, ընտրել > հըրէլ, ընտանիք > ընդանիք:

Որպես հայերենի ընդհանուր օրինաչափություն, երկու և ավելի բաղաձայնների միջև լսվում է զաղտնավանկ ը-ն: Գրաբարի զաղտնավանկի ը-ն

մնում է անփոփոխ կամ հնչյունափոխվում է այլ ձայնավորների՝ նայած թե նախորդ կամ հաջորդ վանկի բարբառային ձևերում ինչպիսի ձայնավորներ կան: Ըստ այնմ, եթե այդ վանկերի բարբառային ձևերում առկա են ա, է ձայնավորները, ը-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ կրակ>գրրագ, գրել>բրել և այլն: Իսկ եթե նախորդ կամ հաջորդ վանկերի բարբառային ձևերում հընչվում են ու, ի և ո>օ ձայնավորներ, ապա սրանց առնմանությամբ գաղտնավանկի ը-ն համապատասխանաբար հնչյունափոխվում է ու-ի, ի-ի կամ օ-ի. այսպես՝ թթու>թութու, ծնունդ>ձունունդ, տխուր>դուխուր և այլն. լիտր>լիդիր, փնթի>փինթի, ոսկր>օսկօր և այլն:

Բարբառում որոշիչ հոդի բնկալմամբ բառավերջում լսվում է ը. օրինակ՝ թասը, քիրքը, դունը և այլն:

Ի

Շեշտի տակ կամ շեշտահաջորդ վանկի ի-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. այսպես՝ ինչ>ինչ, ինքն>հինքը, աղջիկ>ախշին, գին>քին, գինի>քինի, անալի>աննի, լեզի>լէզի և այլն: Հեռի>հարու բառում բառավերջի ի-ի փոխարեն բարբառն ունի ու: Երկվանկ բառերի առաջին վանկի հ-ն հնչյունափոխվում է ը-ի, եթե երկրորդ վանկի ձայնավոր հնչյունը ա կամ ե>է-ն է. այսպես՝ գիշեր>բըշեր, իրար>հըրար, լիզել>լըզէլ, լիսեռն>լըսառ, սիսեռն>սըսառ և այլն:

Ո

Բառասկզբում, ինչպես նաև միավանկ ու երկվանկ բառերում ո-ի դիմաց բարբառն ունի օ. այսպես՝ ոջիլ>օջիլ, ոսկի>օսկի, ոսպն>օսպ, գող>քող, ժողով>ժօղօվ և այլն. բազմավանկ բառերի միջնավանկի ո-ն հնչյունափոխվում է ը-ի կամ սղվում, իսկ մյուս վանկերում մնում է անփոփոխ. այսպես՝ ժողովել>ժօղվէլ, կոտորել>գօյրէլ, սովորիլ>սօրվիլ, ոլորել>օլրէլ և այլն:

Սակայն կրոնական կամ դրական բազմավանկ բառերում, ինչպես նաև այն ածանցյալ բառերում, որոնց ածանցի ձայնավորը ո>օ է, այս օրենքը չի գործում. այսպես՝ աղտոտել>աղտօղէլ, ողորմիլ>օղօրմիլ, քրիստոնեայ>քրիստօնյա, եպիսկոպոս>էբիսկօբօս և այլն:

Ո-ի մասնավոր հնչյունափոխություններ են՝

Ո>է՝ խմոր>խըմէր, խնձոր>խընձէր, ջրհոր>չըխվէր, խոլոր>խօլէռ «խոժոռ»:

Ո>ա՝ մոխիր>մախիր, մոռանալ>մառնալ:

ՈԻ

Ու-ն բառասկզբում հիմնականում մնում է անփոփոխ. ուզել>ուզէլ, ութ>ութը, ուխտ>ուխտ, ունիմ>ունիմ, ուրախ>ուրախ, ուրբաթ>ուրփաթ և այլն: Նույն դիրքում ու-ն հնչյունափոխվում է օ-ի՝ ո՞ւր>հօ՞ր, ու՞մ>հօ՞մ, ուղղորդ>օղօրթ, ուշ>օշ բառերում:

Բառամիջի ու-ն բազմավանկ բառերի երկրորդ վանկում հնչյունափոխվում է ը-ի, իսկ միավանկ, երկվանկ բառերում և բազմավանկ բառերի մյուս վանկերում մնում է անփոփոխ: Այսպես՝ գարուն>քարուն, թուփ>թուփ, կուրծք>գուրսկ, մուկն>մուկ և այլն. պտուտիլ>բրդրդիլ, տանուտէր>դանդէր:

Սակայն բազմավանկ բառերի երկրորդ վանկի ու-ն մնում է անփոփոխ, եթե՝ 1) բառը բազմավանկ է, և առաջին բաղադրիչը վերջանում է ու-ով՝ երկուշաբաթը > էրգուշափթի:

բ) բառը ածանցյալ է, և արմատի վերջնավանկում առկա է ու ձայնավորը. ինչպես՝ անուշանալ > անուշնալ, երկուական > էրգուրագան:

Բառավերջի ու-ն մնում է անփոփոխ՝ երկու > էրգու, թթու > թութու, լեզու > լէզու, կատու > գաղու և այլն. բայց՝ լու > լօ:

Ձայնավորից առաջ գրաբարյան ու-ն փոխվում է վ-ի. օրինակ՝ աստուած > ասված, զգուհի > զրգվիլ, բուրուռ > փուրվառ, լուալ > վրլալ, շուան > շրվան, յունուար > հունվար և այլն:

ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաբարյան երկբարբառներից այ, ալ (օ), եա, իլ (ել), ոյ երկբարբառներն են զրսևորվել Մայաթիայի բարբառում՝ ենթարկվելով այլևայլ փոփոխությունների: Ինչ վերաբերում է գրաբարյան եայ, եալ, իայ, լոյ եռաբարբառներին, ապա նրանք բարբառում ոչ մի զրսևորում չեն գտել: Սրանցից տյ-ը գրաբարում հանդես է գալիս բառերի թեքման ժամանակ, իայ եռաբարբառով հայտնի է միայն բառը, որը չի անցել բարբառ: Եայ, եալ եռաբարբառների մասին պետք է նշել հետևյալը. գրաբարից բարբառն անցած մի քանի բառերում հիշյալ եռաբարբառները գտնվում են բառավերջին բաց վանկում, ուստի գագարում են եռաբարբառ լինելուց և դիտվում են իբրև եա երկբարբառի ու յ > վ կամ յ ձայնորդից կազմված հնչյունախմբեր:

Ալ (օ), ել, ոլ, իլ (ել) երկբարբառները հիմնականում քննության ենթ ենթարկել միայն փակ վանկում գտնված դիրքում, այսինքն՝ երբ տվյալ երկբարբառներին հաջորդում են բաղաձայն հնչյուններ: Ձայնավորների միջև կամ բառավերջում այդ երկբարբառների ձայնորդ տարրը վեր է ածվում բաղաձայն հնչյունի: Հետևաբար նրանք դադարում են երկբարբառ լինելուց: Մենք նրանց ձայնորդ տարրը դիտել ենք իբրև բաղաձայն, ըստ որում էլ ձայնավորներն ու բաղաձայնները քննության են ենթարկվել համապատասխան հնչյունների փոփոխությունների ուսումնասիրման ժամանակ:

Այսպիսով, Մալաթիայի բարբառը չունի ո՛չ երկբարբառ և ո՛չ էլ եռաբարբառ:

ԱՅ

Բառասկզբում այ երկբարբառի դիմաց բարբառը հիմնականում ունի ա. ալսպես այդ > ադ, ազի, ալն > ան, անի, ալս > աս, ս սի, ալսօր ասօր. ալր(իկ) > արիդ: Նույն դիրքում ալզի > էջի բառում ունենք այ > ե, իսկ այլ բառն ունի երկու տարբերակ՝ ալ(ա) և ել:

Բառամիջում միավանկ և երկվանկ բառերի այ-ը ը ձայնորդից առաջ հնչյունափոխվել է ա-ի. իսկ մնացած դիրքերում՝ ա-ի. ալսպես՝ ժալը > ձար, հալը հար, վալը > վար (վարմարթ աստոր արարածք), բալց՝ եղբալը > ախփար, դէպ ի վալը > թըրի վար:

Երկալն > էրգան, լալն > լան, խալթել > խաթէլ, ձալն > ցան, քալլել > քալլէլ, տալզը > դաքրը և այլն. բալց՝ փալտ > փաղ:

Բազմավանկ բառերի երկրորդ վանկի այ-ը հնչյունափոխվում է Ե-ի. ալսպես՝ երկալնանալ > էրզըննալ: Իսկ մի քանի բազմավանկ բառերում այ-ը

րնկել է. սատանայութիւն > սագանութուն, փեսայութիւն > փէսութուն, տղայութիւն > դրղութուն, հրամայեցեք > հրամմէցէք:

Բառավերջում աւ-ը, իբրև ոչ երկբարբառ, միավանկ բառերում արտասանվում է այ՝ հայ > հայ, վայ > վայ: Բաղմավանկ բառերում ընկնում է յ ձայնորդը և մնում է միայն ա-ն՝ ակոայ > արգա, ագուգայ > հաբուքա և այլն:

ԱԻ

Այս երկբարբառը հայերենում պատմական հնչյունափոխությամբ վերածվել է օ-ի: Նույն օրինաչափությունը առկա է նաև Մալաթիայի բարբառում. այսպես՝ բառասկզբում՝ աւգնել > օքնել, աւղ > օղ, աւտար > օդար և այլն, բառամիջում՝ աղաւթք > աղօտկ, ամաւթ > ամօթ, գաւտի > քօդի, խաւք > խօսկ և այլն: Բացառություն է յանք > ունք հնչյունափոխությունը, որը այլ բարբառների ազդեցության արդյունք է:

ԵԱ

Եա-ն բարբառում սովորաբար հնչյունափոխվում է է-ի. ինչպես՝ առաջնեակ > առչընէգ, երանեակ > երնէգ, գրեա > քրրէ՛ և այլն: Յորեան > ցօրին և ատեան > ադին բառերում եա-ն հնչյունափոխվում է ի-ի:

ԻԻ (ԵԻ)

Դեռևս գրաբարի շրջանում իսկ իւ երկբարբառի արտասանությունը նույնացել էր եւ-ի հետ, շատ բառերում էլ նրանք ունեին զուգահեռ գրություններ՝ ալելը||ալիր, աղբելը||աղբիր, և այլն: Չայնավորից առաջ կամ բառավերջում նրանք դադարում են երկբարբառ լինելուց և արտասանվում են որպես իվ կամ էվ, ինչպես՝ ազնիւ > ազնիվ, պատիւ > բադիվ և այլն. դ-ից առաջ իւ-ը դառնում է է. ինչպես՝ գիւղ > քէղ, ճիւղ > ջէղ. բառասկզբում իւ-ը հնչվում է ի՛ իւր > իր.

Բառամիջում իւ-ը կրել է հետևյալ փոփոխությունները.

իւ > ի. ալիւր > ալիր, աղբիւր > ալիբիր, արիւն > արին, հարիւր > հարիր, հերիւն > հէրին. կիւտակէ > գիրտագի, ձիւթ > ցիթ.

իւ > օ. սիւն > սօն, ձիւն > ցօն, աղիւս > աղօս.

իւ > ու. հիւսել > հուսէլ, մրջիւն > մուրչում.

ութիւն ածանցի իւ-ի դիմաց բարբառն ունի ու՛ մեծութիւն > մանձութուն և այլն:

ՈՅ

Բառասկզբում ոյ-ը դարձել է ու՛ ոյթ > ութ:

Բառամիջում ոյ-ը գտնվում է միշտ շեշտի տակ. այդ երկբարբառի դիմաց միավանկ բառերում բարբառն ունի օ, իսկ բաղմավանկ բառերում՝ ու. այսպես՝ բոյթ > փօթ, լոյս > լօս, գոյն > քօն, թոյլ > թօլ, քոյր > քօր, աշխոյթ > աշխութ, անոյշ > անուշ, կապոյտ > գաբուդ:

Այս օրենքից շեղվում են՝ պտոյտ > բրդօդ, ընկոյզ > ընգօզ բառերը:

ԲԱՎԱԶԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձայնեղ պայթականներ բ, գ, դ

Ձայնեղ պայթականներ բ, գ, դ-ն բառասկզբում, բառամիջում և բառավերջում համապատասխանաբար հնչյունափոխվում են շնչեղ խուլ փ, ք, լ և հնչյունների, իսկ ն, մ ռնգայիններից հետո մնում են անփոփոխ. այսպես՝

Բառասկզբում՝ բուրգ>փուրթ, բաղանիք>փաղնիք, գարի>քարի, գարուն>քարուն, դադար>թաթար, դանակ>թանազ և այլն:

Բառամիջում՝ աղբիւր>ախփիւր, եղբայր>ախփար, աղանիւ>հաքնիւ, ագի>աքի, արեգակն>արքաղ, բրդել>փրթիլ, երդումն>էրթում և այլն:

Բառավերջում՝ երբ>յափ, որբ>օրփ, աւագ>ավաք, բուրգ>փուրթ, կախարդ>գախարթ, մարդ>մարթ և այլն:

Հատուկ անունների մեջ՝ Աբել>Ափէլ, Գուրգէն>Քուրքէն և այլն:

Մ, ն ռնգայիններից հետո՝ բամբակ>փամբազ, Համբարձում>Համբօ, ժանգ>ժանգ, հինգ>հինգ, եղունգն>ուղունգ, կաղանդել>զաղընդէլ և այլն:

Խուլ պայթականներ ա, կ, տ

Պ, կ, տ խուլ պայթականները ս, շ, խ խուլերից հետո, ինչպես նաև ք-ից առաջ մնում են անփոփոխ, իսկ մնացած դիրքերում հնչվում են ինչպես ձայնեղներ՝ պ>ք, կ>զ, տ>դ: Այսպես՝ պազանել>բաքնէլ, պառ>բաղ, պարապ>բարբաբ, կաթն>զաթ, կատու>զադու, տալ>զալ, տանձ>զանձ, ամպոտ>ամբօզ, անապակ>ամբազ, ակոռայ>արզա, լակել>լրզէլ, պառակիլ>բառզիլ:

Բառավերջում՝ կապ>զաբ, պապ>բաբ, խոտ>խօղ, սիրտ>սիրդ, երէկ>էրէզ և այլն:

Ս, շ, խ-ից հետո կամ ք-ից առաջ՝ ոսպն>օսպ, վախկոտ>վախկօղ, ոսկի>օսկի, հաստ>հաստ, աստառ>աստառ, նստիլ>նրստիլ, խստոր>սրխսօր, ոտք>օտկ, միտք>միտկ, պէտք>բէտկ և այլն:

Մ, ն, ր ձայնորոշներից հետո կ-ն և տ-ն հնչյունափոխվում են լ-ի. անկանիլ>իյնալ, մեկնել>մէյնէլ, ցնկնիլ>ցըյնիլ, ընտրել>հըյրէլ, կտրիճ>զըյրիջ, կտրել>զըյրէլ և այլն:

Շնչեղ խուլ պայթականներ փ, ք, լ

Փ-ն բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. փաթաթել>փաթտէլ, փեսայ>փէսա, տափակ>զափազ, եփել>էփէլ, թեփ>թիփ և այլն:

Ք-ն խուլ բաղաձայններից հետո ափսոսանքում է ինչպես խուլ պայթական կ, իսկ մնացած դիրքերում մնում է անփոփոխ. այսպես՝ քակել>քազէլ, քար>քար, թքանել>թուքնէլ, կաքաւ>դաքավ, աշխարհ(ք)>աշխարք, գիրք>բիրք և այլն:

Խուլերից հետո՝ խօսք>խօսկ, կուրծք>դուրսկ, անէծք>անէսկ, մէջք>մէշկ, դժոխք>թըժօխկ, աղբատ>ախկաղ և այլն: Բերված օրինակները ցույց են տալիս, որ ք-ից առաջ ձայնեղները խլանում, իսկ բարդ հնչյուններն էլ տարրալուծվում են ու պահում միայն խուլ բաղադրիչը: Այսպես՝ զ, շ-ի տարրալուծումից հետո մնում է շ, ք-ից հետո՝ տ, իսկ ձ, ծ, ծ, ց-ից հետո՝ ս:

Ի-ն համեմատաբար կայուն բաղաձայն է և սովորաբար մնում է անփոփոխ. այսպես՝ թաթ>թաթ, թաց>թաց, անօթի>անօթի, երթալ>էրթալ, կաթ>զաթ, կոթ>զօթ և այլն: Միևնույն բառում իրար հաջորդող ք-երից երկրորդը տարնմանությամբ դառնում է տ՝ փաթաթել>փաթտէլ, թօթափել>

թօտփէլ > թօֆտիլ և այլն: Խ-ից կամ ղ > խ-ից հետո ք-ն ևս խլանում է և հընչ-
ւում ք՝ թուղթ > թուխտ, յաղթել > հախտէլ:

Խ-ն խլանում է նաև Ի-ից առաջ՝ աղօթք > աղօտկ և այլն:

ՊԱՅԹԱՆՓԱԿԱՆՆԵՐ՝

Ձայնեղ պայթաշփականներ ջ, ձ

Ն ռնգայինից հետո մնում են անփոփոխ. այսպես՝ թնջուկ > թունջուգ,
տանջանք > դանջանք, բրինձ > փրրինձ, ասնձ > դանձ և այլն: Բաղաձայններից
առաջ ջ-ն հնչյունափոխվում է շ-ի, ապա այն տարրալուծվելով ք, շ բաղա-
դրիչների՝ պահպանում է ջ-ն. նույն ձևով էլ ձ-ն տարրալուծվում է դ, ց-ի և
պահպանում գ-ն (իսկ խուլներից հետո՝ ս). այսպես՝ մէջք > մէշկ, իջանել >
էշնալ, առաքք > առաշկ, ոջլոտ > օջլօդ (րայց՝ ոջիլ > օշիլ), անձրև > հարգէվ,
թնձկալ > թրգգալ և այլն:

Մնացած դիրքերում ձայնեղ պայթաշփականներ ջ-ն և ձ-ն համապատաս-
խանաբար հնչյունափոխվում են շնչեղ խուլ պայթաշփականներ շ-ի և ց-ի.
այսպես՝ ջահ > շահ, ջարդ > շարի, ձայն > ցան, ձեռք > ցառք, աղջիկ > ախիկ,
թրջել > թրշէլ, արձակել > արցըգէլ, ականջ > անգաշ, մէջ > մէշ բարձ > փարձ,
օձ > օց և այլն:

Խուլ պայթաշփականներ և, ծ

Բառասկզբում, բառամիջում՝ ձայնավորից առաջ և բառավերջում և-ն
և ծ-ն համապատասխանաբար հնչյունափոխվում են ջ-ի և ձ-ի. այսպես՝
ճակատ > ջազադ, ճանճ > ջանջ, ճանաչել > ջաշնալ, ճերմակ > ջէրմագ, կոճակ >
գօջագ, կարճ > գարջ, ծալել > ծալլէլ, ծախել > ձախէլ, ծանր > ձանդըր, ածել >
հաձէլ, արծաթ > էրձաթ, անիծ > անիձ, աստուած > ասվաձ, ծիծ > ձիձ և այլն:

Բառամիջում բաղաձայններից առաջ և > ջ-ն և ծ > ձ-ն տարրալուծվում են:
Ըստ որում ձայնեղներից առաջ մնում են ձայնեղ տարրերը՝ ծ և գ, իսկ խուլ-
ներից առաջ՝ ս և ջ (վերջին հնչյունի համար բարբառում օրինակներ չկան). այս-
պես՝ կոճակել > գօժգէլ, ածելել > ազլէլ, խաժանել > խազնէլ, անէծք > անէսկ,
կուրծք > գուրսկ և այլն:

Շնչեղ խուլ պայթաշփականներ շ, ց

Բաղաձայններից առաջ շ-ն և ց-ն տարրալուծվելով բաղադրիչների՝ կորց-
նում են պայթական մասերը և պահում շփական տարրերը (շ-ից մնում է շ,
իսկ ց-ից՝ ս). այսպես՝ ամաշել > ամըշնալ, աշք > աշկ, կոշնակ > գօշնագ, ճա-
նաչել > ջաշնալ, բշանալ > բիշնալ, անցանել > ասնիլ, խոցոտել > խօստէլ, ծո-
ցաւոր > ձօսվօր, ուռէցք > ուռէսկ և այլն:

Նույն ձևով ց-ն հնչյունափոխվում է ս-ի ցոյական հիմքով կազմված
կրավորական բայերում՝ վրլասվիլ, փասվիլ և այլն:

Մնացած դեպքերում շ-ն և ց-ն մնում են անփոփոխ. այսպես՝ շամիշ >
շամիշ, շար > շար, ցած > ցաձ, ցամտք > ցամաք, աղաշել > աղաշէլ, թոշուն >
թուշուն, դրացի > թրրացի, քացախ > քացախ, գոթանշ > գօնբաշ, խաշ > խաշ,
հաց > հաց, վեց > վէց և այլն:

ՇՓԱԿԱՆՆԵՐ

Զայնեղներ զ, ժ, ղ, վ

Չ.—զ-ն կայուն բաղաձայն է և բոլոր դիրքերում սովորաբար մնում է անփոփոխ. այսպես՝ զատիկ>ղաղիգ, զարկանել>զարնէլ, աղապ>աղաբ, աղատել>աղաղէլ, լեզու>լէզու, ընկոյզ>ընգօզ, խոզ>խօզ և այլն:

Չա հնչյունախումբը գառնում է սկ. այսպես՝ աղզ>ասկ, զգոյշ>ուսկուշ:

Չ-ի հնչյունափոխության մասնավոր դեպքեր են ա>ձ՝ երազ>էլաձ և ա>ց՝ ձուազեղ>ցըվացէղ:

Փ.—բոլոր դիրքերում նույնպես հիմնականում մնում է անփոփոխ. ինչպես՝ ժամ>ժամ, ժանգ>ժանգ, արժան>աժան, բաժանել>փաժնէլ, դժուար>թըժար, ոյժ>ուժ, ապառաժ>աբառաժ և այլն:

Փգ հնչյունախումբը գառնում է շկ՝ դժգոհի>թըշկօյի, պժգալ>բըշկալ «զղվել»: Մասնավոր է ժ>ջ հնչյունափոխությունը պատիժ>բաղիջ բառում:

Ղ.—բառասկզբում ղ-ով սկսվող հայերեն բառ շունի բարբառը:

Բառամիջում և բառավերջում ձայնավորներից հետո և ձայնորդներից ու բարբառի ձայնեղներից առաջ ու-ն մնում է անփոփոխ. այսպես՝ աղ>աղ, բաղանիք>փաղնիք, աղիս>աղօս, գիւղ>քէղ, գող>քօղ և այլն:

Բարբառի խուլ և շնչեղ խուլերից առաջ ու-ն հնչյունափոխվում է խ-ի: Այս դիրքում գրաբարյան շնչեղ խուլերը ու>խ-ից հետո վերածվում են խուլերի, իսկ շնչեղ խուլի հնչյունափոխված գրաբարյան ձայնեղները նույն դիրքում մնում են անփոփոխ. այսպես՝

ա) գրաբարյան շնչեղ խուլերից առաջ՝ աղբատ>ախկաղ, թուղթ>թուխտ, յաղթել>հախտէլ, ճեղք>ջէխկ և այլն:

բ) ձայնեղազրկված շնչեղ խուլերից առաջ՝ աղբ>ախփ, աղբիւր>ախփիւր, աղջիկ>ախչիկ և այլն: Մասնավոր է խաղող>հավէղ բառի ու>վ-ն, որը տարնմանության արդյունք է:

Վ.—բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. այսպես՝ վաղել>վաղէլ, վախ>վախ, գովել>քօվէլ, ժողովել>ժողվէլ, ծով>ձօվ, կով>գօվ և այլն:

Ս.—սովորաբար մնում է անփոփոխ. այսպես՝ սալոր>սավլօր, սեր>սիր, սին>սօն, աստուած>ասվաձ, խօսիլ>խօսիլ, ամիս>ամիս, երես>էրէս և այլն (բայց՝ սաղմոս>սաղմօց):

Թս կամ տս հնչյունախմբերը առաջացնում են ց բարդ հնչյունը՝ արտասուք>արցունք, վաթսուն>վաղժուն. վերջին բառի համաբանության մեջ էլ յիսուն>իցժուն:

Շ.—բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. շաբաթ>շափութ, շալակ>շալազ, գիշեր>քըշէր, մաշել>մաշէլ, անոյշ>անուշ, էշ>էշ և այլն:

Ն.—մնում է անփոփոխ. խաշ>խաշ, խոզ>խօզ, մոխիր>մախիր, ծախել>ձախէլ, կանուխ>գանուխ, մուխ>մուխ և այլն, բայց՝ խաղող>հավէղ:

Հ.—բառասկզբում, ինչպես նաև ան նախածանցից հետո մնում է անփոփոխ. այսպես՝ հազ>հազ, հաղար>հազար, անհամ>անհամ, անհաւատ>անհավազ և այլն:

Երբ բառամիջում ձայնավորից հետո գտնվող հ-ին հաջորդում է ի ձայնավորը, ապա սղվում է հ-ն, և նույն դիրքում երևան է գալիս յ ձայնակապը:

Այսպես՝ պահել > բէհիլ > բէյիլ, դահիձ > թալիջ, դժգոհիլ > թըշկոյիլ, թագուհի > թաքույի և այլն:

Ձայնավորներից հետո հ-ի թուլացումը պայմանավորված է ձայնավորների արտաբերմանը, այսինքն՝ ձայնալարերի թրթումանր նախորդող օդի հոսանքի արտամղման հանգամանքով: Նույն ձևով էլ հ-ն թուլլ է հնչում բառավերջում, երբ գտնվում է ձայնավորներից (հատկապես ա-ից) հետո՝ ագահ > աքահ(հ), բահ > փահ(հ), ջահ > շահ(հ) և այլն:

Բառավերջի հ-ն, գտնվելով Վ-ից առաջ կամ Ե-ից հետո, ընկնում է. ինչպես՝ աշխարհ(ք) > աշխարք, խոնարհ > խօնար, պահք > բաք և այլն: Ընկնում է նաև բարդ բառերի երկրորդ բաղադրիչի սկզբի հ-ն. այսպես՝ հրահրել > հրարէլ, հովահարել > հօվարէլ, ջրհեղեղ > շրէղէղ, պատուհան > բաղֆան: Բայց երբ ձ-ն հանդես է գալիս որպես վանկափակ հնչյուն, իսկ հաջորդ վանկն էլ սկսվում է բաղաձայնով, ապա մնում է անփոփոխ. այսպես՝ մահուան > մահվան, ագահանալ > աքահնալ, պահվտել > բահվըղիլ և այլն:

ՁԱՅՆՈՐԳՆՆԵՐ Լ, Ն, Մ, Ր, Ռ, Յ, Ի (ւ)

Լ.— միշտ մնում է անփոփոխ. այսպես՝ լակել > լըգէլ, լայն > լան, ալիւր > ալիր, ելանել > էլլալ, աել > ալիլ, ծիլ > ձիլ և այլն:

Գրաբարի անորոշ դերբայի լ-ն նույնպես մնում է անփոփոխ. դրել > բըրէլ, խաղալ > խաղալ և այլն: Անցյալ դերբայի լ-ի դիմաց բարբառը վաղակատար դերբայում ունի Ե. օրինակ՝ դրեալ > բըրիր և այլն:

Ն.— այս ձայնորդը բառասկզբում, ձայնավորների միջև, մի բաղաձայնի մոտ և բառավերջում մնում է անփոփոխ. այսպես՝ նամակ > նամագ, նոր > նօր, անուն > անուն, խոնարհ > խօնար, շուն > շուն, տուն > դուն և այլն:

Ձայնավորից հետո և երկու բաղաձայնից առաջ գտնվող բառամիջի ն-ն սղվում է: Ն-ն այդ դիրքում կարող է գտնվել նաև ձայնավորների սղման կամ բաղաձայնների հավելման հետևանքով. այսպես՝ անձրև > հարղէվ, ընտրել > հըյրէլ, մանրել > մանդրել > մայրէլ, անկանիլ > անկնիլ > իյնալ և այլն:

Եթե բաղաձայններից մեկը սէր հոգնակերտի ն հնչյունն է, ապա այս կրևույթը բացառվում է. օրինակ՝ ձունունդնէր, գանանչնէր, հրվանդնէր և այլն: Նրթնային ք և մ հնչյուններից առաջ ն-ն հնչյունափոխվում է մ-ի. օրինակ՝ անբախտ > ամբախտ, անմահ > ամմահ, այնպես > ամբէս:

Նլ հնչյունախումբը դառնում է նն, իսկ լն-ն՝ լլ. անալի > աննի, կլանել > դըլլէլ, շինի > շըլլի, ելանել > էլնէլ > էլլալ, լինել > ըլլալ: Ածանցյալ բառերում արմատի անկախ գիտակցման անհրաժեշտությամբ այս հնչյունափոխությունը տեղի չի ունենում. այսպես՝ թուլանալ > թօլնալ, խլանալ > խուլնալ, անլեղու > անլէղու և այլն: Անալի > աննի բառը չի գիտակցվում որպես ածանցյալ, քանի որ արմատի ալի իմաստը մթազնվել է (բարբառում կա նաև աղ, աղր ձևը): Բառավերջի գրաբարյան ն վերջնահանդ հնչյունը բարբառում ընկնում է. այսպես՝ արեգակն > արքագ, ակն > աղ, դուն > թօռ, լիսեոն > լըսառ, մատն > մաղ և այլն:

Մ.— բոլոր դիրքերում մնում է անփոփոխ. այսպես՝ մաղ > մաղ, մարդ > մարթ, աման > աման, ամառն > ամար, ժամ > ժամ, համ > համ և այլն:

Ր.— Բարբառը Ե-ով սկսվող բառ չունի: Բառամիջի Ե-ն շատ անկայուն է, որը որոշ բառերում ընկնում է, որոշ բառերում հնչվում ռ կամ տատանվում ք

և Ե հնչյունների միջև. այսպես՝ շ և Յ բաղաձայններից առաջ ընկնում է. օրինակ՝ արժան>աժան, քարշել>քաշէլ, խարշել>խաշէլ: Նույն դիրքի գրական բառերում Ե-ն մնում է անփոփոխ՝ վարժուիլ>վարժվիլ, վարժատուն>վարժադուն և այլն:

Երազ>էլաձ բառում Ե-ն մասնավոր դեպք է:

Բառավերջի Ե-ն մնում է անփոփոխ՝ հազար>հազար, քար>քար և այլն:

ԼԵ.—Ո-ով սկսվող բառ չկա: Նույնիսկ օտար փոխառությունները բառասկզբին ստանում են Ե կամ Ու հենարանը՝ ոազի>ըռազի, ռուս>ուռուս, ռեհան>ըռէհան և այլն:

Բառամիջում և բառավերջում Ո-ն հիմնականում մնում է անփոփոխ. առաջ>առաշ, առու>առվու, դուռն>թօռ, սիսեռն>սիսառ և այլն:

Յ.—յ ձայնորդը բառասկզբում ընկնում է, կամ ենթարկվելով հայերենի պատմական ընդհանուր օրինաչափությանը, արտասանվում է որսլես կոկորդային խուլ շփական հ. այսպես՝

ա) յ-ն ընկնում է՝ յաջող>աչող, յատակ>ադադ, Յարութին>Արթին, յիսուն>իցժուն, յղի>ըղի և այլն:

բ) յ-ն հնչյունափոխվում է հ-ի՝ յանկարծ>հանդարձ, յարգ>հարք, յարդ>հէրթ, յունիս>հունիս, յուլիս>հուլիս, յօժար>հօժար և այլն:

Բառամիջում յ-ն մնում է անփոփոխ՝ հայիլ>հայիլ, մայիս>մայիս: Այդ դիրքում յ-ն նաև ձայնակապի դեր է կատարում՝ փէրէյի յա, քըրէյի յա, էյի, էյիր, էյաք և այլն: Բառավերջի յ-ն միավանկ բառերում մնում է անփոփոխ, իսկ բազմավանկ բառերում, երբ հանդես է գալիս ա ձայնավորից հետո, ընկնում է. այսպես՝ հայ>հայ, վայ>վայ. ագուգայ>հաքուքա, տղայ>դրղա, շուխայ>շուխա, փեսայ>փէսա և այլն:

Ի(ւ).—ձայնավորների միջև կամ ձայնավորներից հետո՝ բառավերջում գտնված դիրքի յ ձայնորդը, որը հանդես է գալիս իբրև ոչ երկբարբառի տարր, արտասանվում է ինչպես վ. այսպես՝ աւագ>ավաք, աւել>ավիլ, հաւանիլ>հավնիլ, բնաւ>փընավ, ձեւ>ցէվ, կռիւ>ղըրիվ, անձրեւ>հարզէվ և այլն:

ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Հավելում

հ՝ ածել>հաձէլ, արածել>հարձել, անձրև>հարզէվ, ում>հօմ, ինքն>հինքը, ընտրել>հըյրէլ և այլն:

դ՝ ծանր>ձանդըր, մանր>մանդրր:

ն՝ աղջի(կ)>ախշին, դրացի>թըրացին, Երեկոյ>ուռունգուն, մեծ>մանձ, բարձր>փանձրը, ճշալ>ջընչալ, կանաչ>գանանչ, քիթ>քինթ, արտասուք>արցունք, բաժակ>փաժանք, փողորակ>փօրղանք:

վ՝ սալոր>սավլօր, առու>առվու:

շ՝ օրհնել>օրշնէլ:

2. Անկում

Ձայնավորների անկման օրինաչափությունները քննարկվել են «Ձայնավորների փոփոխությունները» բաժնում: Մնում է այստեղ նշել բաղաձայնների անկման դեպքերը:

Բառասկզբում՝ ս՝ սպանանել>բաննել, սկեսուր>գէսուր, սկեսրայր>
 ուէսրոր:

կ՝ կնքապապ>հրնքաբաբ, կշիոբ>շառբ:

յ՝ յատակ>ադագ, յիսուն>իցծուն և այլն:

հ՝ համար>ըմար:

Բառամիջում՝ կ՝ զարկաննել>զարնել, կնկտիբ>զրնդէբ, «կանայք»:

հ՝ նահատակ>նաադագ, օրհնել>օրշնել, աշխարհ(ք)>աշխարք, շնոր-
 հ(ք)>շրնօրք, պահք>բաք և այլն.

վ՝ ուղղորդ>օղօրթ, ողկույզ>դօղ, խղճմտանք>խրժմըդանք.

վ՝ բովհրել>փօրհէլ, Քերովբէ>Քէրօփ.

տ՝ պատպան>բաշբան, աստուած>ասվաձ, աստղ>ասըղ.

ր՝ շ, ժ-ից առաջ՝ արժան>աժան, քարշել>քաշէլ, խարշել>խաշէլ, շարժք>
 ժաժք. այլ բառերում՝ բարձր>փանձրր, իրք>իք, երբ>յափ, տարգալ>թը-
 քալ, արտորալ>ադօրնալ, ճանապարհ>ջամփա.

ի՝ ի ներքս>նէրս, աչք կապուկ>աշգաբուգ, խօսք կապ>խօսգաբ:

Բառավերջում՝ ն վերջնահնչյունը՝ ամառն>ամար, բեռն>փառ, դուռն>
 թօռ և այլն.

ն՝ աղջիկ>ախչին.

ր՝ կղմինդր>զըղմիդ:

յ՝ բազմավանկ բառերում՝ տղայ>դըղա, վիլայ>վըգա և այլն:

Բարբառում նկատվում են նաև հնչյունների հատման, դրափոխության և
 հնչյունների կրկնության երևույթներ:

* *

Հանրագումարի բերելով Մալաթիայի բարբառի հնչյունափոխական ընդ-
 հանուր երևույթները, կարելի է հետևյալ եզրակացությունների հանգել.

Մալաթիայի բարբառն ունի երկաստիճան խլազուրկ (շնչեղ խուլերով հա-
 րուստ) բաղաձայնական համակարգ, որպիսին ունեն Տիգրանակերտի, Նիկո-
 միդիայի, Ռոդոսթոյի և Օրտուի բարբառները:

Ձայնավորների համակարգում, բացի ընդհանուր հայերենի ձայնավոր-
 ներից (ա, ի, ու, օ, է, ը), բարբառում կան նաև ա, օ, ու ձայնավորները,
 որոնք, հատկապես վերջին երկուսը, հիմնականում գործածական են փոխառ-
 յալ բառերում: Գրաբարի համեմատությամբ ավելացել է ֆ հնչյունը, իսկ լ-ն
 դարձել է վ: Ձայնավորների հնչյունափոխությունների մեջ ընդհանուրն այն է,
 որ նրանք բազմավանկ բառերի վերջընթեր վանկում հնչյունափոխվում են ը-ի
 կամ սղվում, իսկ մնացած դիրքերում սովորաբար մնում են անփոփոխ:

Բարբառում գործում են նաև առնմանության և տարնմանության օրենք-
 ները: Ընդհանուր առմամբ ձայնավորների փոփոխությունները մեծ չեն, և
 էթն ընդունենք, որ բարբառի հասկանալի լինելը կախված է ձայնավորների
 փոփոխության չափից, ուստի պետք է պարզ լինի, որ Մալաթիայի բարբառը
 չի կարելի դասել հայերենի «անհասկանալի» բարբառների շարքին: Բարբառը
 չունի ո՛չ երկբարբառներ, ո՛չ էլ եռաբարբառներ:

Բաղաձայնների փոփոխությունների մեջ հատկանշական է անկախ դիր-
 քում, այսինքն՝ բառասկզբում, բառամիջում՝ ձայնավորների միջև, և բառ-
 վերջում՝ ձայնավորներից հետո, գրաբարյան ձայնեղների հնչյունափոխվելը

շնչեղ խուլերի և գրաբարյան խուլերի ձայնեղացումը բարբառում: Այս երե-
վույթը ընդհանուր է և՛ պայթականների, և՛ պայթաշփականների համար: Կախյալ դիրքում բաղաձայնները փոխազդում են միմյանց վրա, այսինքն՝ գոր-
ծում են փոխազդեցական հնչյունափոխության օրենքները. նշենք գրանցից մի
քանիսը.

ա) Հակառակ անկախ դիրքում գտնվող ընդհանուր օրենքին՝ ն, ու ոնգա-
յիններից հետո գրաբարի ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները
բառամիջում և բառավերջում մնում են անփոփոխ (հինգ > հինգ, խնդալ > խըն-
դալ և այլն):

բ) Խուլ պայթականները բարբառի ս, շ, խ խուլերից հետո կամ շնչեղ
խուլ ք-ից առաջ մնում են անփոփոխ (հաստ > հաստ, կսկիծ > գրսգիծ և այլն):

գ) Մ, ն, ր ձայնորդներից առաջ գ, կ, տ հնչյունները փոխվում են յ-ի
(ընտրել > հըրըլ, մեկնել > մէյնէլ «փռել», կանգնիլ > գայնիլ): Նույն երևույթը
նկատվում է նաև, երբ հ-ն գտնվում է հ-ից առաջ (թագուհի > թարույի):

դ) Բաղաձայններից առաջ պայթաշփականները տարրալուծվում են
բաղադրիչների, կորցնում են պայթական մասը և պահպանում շփական տար-
րը: Ձայնեղներից առաջ նրանք դառնում են ձայնեղ շփական (թնձկալ > թըզ-
դալ), իսկ խուլերից առաջ՝ խուլ շփական (մէջք > մէշկ):

ե) Ձայնեղ շփականները խուլերից և շնչեղ խուլերից առաջ հնչյունա-
փոխվում են խուլերի (ազգ > ասկ, թուղթ > թուխտ, դժգոհիլ > թըշկոյիլ):

Т. С. Даниелян

ФОНЕТИКА МАЛАТИЙСКОГО ДИАЛЕКТА

Резюме

Малатийский диалект является одним из неизученных диалектов армянского языка. Известные лингвисты-арменоведы Р. Ачарян и А. Гарибян занимались данным диалектом, чтобы определить его место в системе морфологической и фонетической классификации армянских диалектов.

В данной статье дается один раздел нашего монографического исследования малатийского диалекта, а именно «фонетика».

В начале описываются звуки данного диалекта, которые сравниваются со звуками древнеармянского литературного языка (грабара) с целью выявить их фонологические изменения. Таким же методом сравниваются с грабаром гласные звуки, дифтонги, а затем согласные. В конце статьи обобщаются фонетические общие закономерности, присущие малатийскому диалекту.

Таким образом, исследование носит сравнительный и описывательный характер. Данный диалект является одним из умирающих диалектов, поэтому его изучение весьма актуально и имеет важное значение для истории и диалектологии армянского языка.